ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 24-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը հյուրաբար գտնվում էր Լենինականում, տեղի հայոց ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում, ս. պատարագի ընթացքում Շիրակի թեմի ողջ հոգևորականությանն ու հավատացյալ ժողովրդին հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, քարոզում է «Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ» (Հովհ. ԺԵ 12) բնաբանով:

* * *

Մարտի 1-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Մարտի 8-ին, կիրակի.—Բ կիրակի քառասնորդական պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին հոգեշունչ քարոզ է խոսում տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որի ընթացքում մահմեդականության վերաբերյալ զեկուցում է տ. Բագրատ աբղ. Գալըստյանը:

* * *

Մարտի 9-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը ճաշկերույթ է տրվում «Էջմիածին» ամսագրի նախկին խմբագիր, Գերագույն հոգևոր խորհրդի գիտ. քարտուղար և հոգևոր ճեմարանի դասախոս դոկտ.-պրոֆ. Աշոտ Գարեգինի Աբրահամյանի ծննդյան 70 և գիտա-մանկավարժական գործունեության 40-ամյակի առիթով:

Ճաշկերույթին ներկա են լինում տ. Կոմիտաս, տ. Պարգև, տ. Վահան, տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և մայրավանքի պատասխանատու անձինք:

Վեհափառ Հայրապետը շնորհավորում է հարգելի հոբելյարին, նշում նրա կատարած օգտակար աշխատանքը Մայր Աթոռում 1944—1955 թվականներին:

Ներկաներից ոմանք ջերմորեն ողջունում են հոբելյարին, որը վերջում որդիական երախտագիտության և շնորհակալության խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին՝ Նրա բարձր ուշադրության համար:

*
* *

Մարտի 10-ին, կիրակի.—Գ կիրակի քառասնորդական պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Նարեկ քհն. Թնգրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Բագրատ աբդ. Գալստյանը՝ «Հայր մեղայ յերկինս և առաջի քոյ» (Ղուկ. ԺԵ 18) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որի ընթացքում ավանդության կարևորության վերաբերյալ զեկուցում է տ. Արսեն եպս. Բերբերյանը:

*
* *

Մարտի 15-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում սրտաբանության վերաբերյալ բանախոսում է բժշկական գիտությունների դոկտ.-պրոֆ. Զավեն Դոլաբջյանը:

Բանախոսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողները:

Հարգարժան պրոֆեսորը ներկաներին ծանոթացնում է սրտին, նրա գործունեությանը և սրտային մի շարք հիվանդություններին:

Հարգելի պրոֆեսորը վերջում հանգամանորեն կանգ է առնում վերջերս Երևանում գումարված սրտաբանության համաշխարհային համաճարակագիտության համաժողովի գիտական-պատմական նշանակության վրա:

Վերջում բանախոսը սիրով պատասխանում է ներկաների հարցերին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել դոկտ.-պրոֆ. Զավեն Դոլաբջյանին և ջերմորեն զրույց ունենում նրա հետ:

*
* *

Մարտի 17-ին, կիրակի.—Դ կիրակի քառասնորդական պահոց (Տնտեսի).

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբդ. Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը՝ «Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺԶ 8) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

*
* *

Մարտի 24-ին, կիրակի.—Ե կիրակի քառասնորդական պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագի ավարտին տեղի է ունենում հոգեհանգիստ՝ անվանի գրականագետ, գրող Խաչիկ Դաշտենցի մահվան առթիվ:

Այս կապակցությամբ հուզիչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով հանգուցյալի գրական, գրականագիտական ու հայրենասիրական արժանիքները:

*
* *

Մարտի 26-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեցին Հայաստանում գտնվող ֆրանսիացի մի խումբ ճարտարապետներ և հնագետներ՝ գլխավորությամբ ֆրանսահայ անվանի ճարտարապետ Էդվարդ Ութուջյանի:

Հարգարժան հյուրերին բարեհաճեց ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Հայոց Հայրապետի և ֆրանսիացի հյուրերի միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց՝ ջերմ մթնոլորտում:

*
* *

Մարտի 28-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեց Հունգարիայի կրոնական գործերի նախարար պրն. Իմրե Միկլոշը՝ ընկերակցությամբ ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Պ. Մակարցևի և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանի:

Մեծահարգ հյուրերին Վեհարանում բարեհաճեց ընդունել Հայոց Հայրապետը և զրույց ունեցավ նրանց հետ՝ ջերմ մթնոլորտում: